Ի ՆԱԻԱԿԱՏԻՍ ՊԱՏԿԵՐԻ

ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՋ.

Ի ՄԵՆԱՍՏԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՑԵՐԿՐՈՐԴԻ ԱՒՈՒՐ ԱՄՍԵԱՆՆ ՓԵՏՐՈՒԱՐԻ ՅԱՄԻ 1846

ԲԱՆԱԽՕՍԱՒԹԻՒՆ

ԱԱԱՅԵԱԼ Ի ԾԻՐԱՆԱՒՈՐ ՊԱՏՐԻԱՐԳԷՆ ՎԵՆԵՏԿՈՅ

Ո՛Ր ս այս օր բարենշան, յորում ըստ իւրաքանչիւր ամաց կատարէ Եկեղեցի զյիշատակ քառասնօրեայ գալստեան Տեառն 'ի տաճարն, 'ի հնգետասան ամաց հետէ և այսր պայծառագոյնս փայլէ ամբարձմամբն Գրիգորի Հաջ, 'ի Պետրոսեանն աթոռ։ Իսկ զարդիս և քան զևս պայծառանայ օրս այս 'ի պաշտօնասէր կղզեկի աստ նաւակատեաց շքեղ պատկերիս, որ այս առաջին անգամ յայս մեր հարկանի, և յայսմհետէ բազմագոյնս անշուշտ ձգեսցէ այցելուս յափունս յայսոսիկ հիւրասէրս։ Այլ ինձ, որ հրաւիրանաւս կոչեցայ հանդիսագիր բերկրաւէտ ժողովոյս լինել, ո՛ տայր և զասացուածս իմ կշռել համեմատս Հարտարութեան ձեռինն այնորիկ որ գիտաց երաստոյ վիմիդ այդպիսիս տալ տիպս կերպարանաց գեղեցիկս և վսեմս, որպէս զի մի՛ իմոց բանիցս անհարթութեամբ նսեմասցի 'ի միտս ձեր ձեռակերտիս պատուականութի։ Սակայն եթէ թերի ևս գտանիցիմ ես յայսմ հանդիսի, ապաքէն դուք ձեզէն իսկ մարթիք լրումն տալ թերութեանն՝ մանր զննելով զհրաշագեղդ Հարտարութիւն. և ինձ այնուհետև ոչ անախորժ ինչ լիցի՝ եթէ նուազեալ ևս յոյժ գտանիցէք զբանս իմ քան զիրացն Հշմարտութիւն. քանզի և պարտութիւնս իմ 'ի պայքարիս՝ փառս յաւելցէ Հարտարապետի գործոյն, և պարգևողին զնոյն, և որոց զպարգևն ընկալան։

Այս արձան մեծաւ խնամով քանդակեալ 'ի պասանեցւոյն Փիդիայ[1] զոր ինքն իսկ Հռովմ մեծարէ իբրև զմի յարժանի յաջորդաց անմահացելոյն Վանովայ, առաջի առնէ մեզ աւադիկ զարբազան Քահանայապետն բազմեալ փառօք 'ի մեծաշուք գահու, նափորտ զանձամբն, և առնովաւ պատուոյն նշանակք, և աջոմն զօրհնութիւն բաշխելով առ տիեզերասփիւռ որդիս կաթուղիկէ եկեղեցւոյ, որպէս նմին միայնոյ վայելէ։ Այ թէ ոք ըստ գեղեցիկ բախտի տեսեալ իցէ 'ի մեծոյ զվսեմ զայն կերպարանս, անդէն նշմարէ 'ի սմա զնկարագիր երեսացն այնպէս Հշգրտահան գծագրեալ, զի և առանց յերկուանալոյ զնախատիպն յիշէ առ ժամայն։ Այլ 'ի զննել անդ ապա զծալս ուրարին և զոր ընդ նովաւ զՀանդերձն որ խորշ զխորշիւ իջանեն, և զմանր ծակտիս վերջաւորացն և զմանուածոյ ոլորս ծոպիցն, և զոսկեհիւս զասղնեգործ կիտուածսն որով պՀնեալ են քղանցքն, և զայլս ևս մասունս զգեստուց քահանայապետին, անդէն 'ի միտ առնու եթէ որչափ հնարագէտ գըտաւ անդրիագործն 'ի կակղել և 'ի հարթել զվէմն գրչաւն իւրով հզօրաւ, նոյնչափ ևս գեղեցկազարդեաց զայն խնամոտ սիրոյն առաւելութեամբ։

Ի չորեսին կողմանս քառակողմն

[1] Յովսէփ Փապրիս, ասպետ և տեսուչ Թանգարանացն որ 'ի Վատիկան, ծնեալ 'ի Պասան գաւառի մերձ 'ի Վենետիկ. որոյ քանդակեալ է և զկիսանդրի երանաշնորհ նախահօրն մերոյ Մխիթարայ որ կայ 'ի մատենադարանի Վանացս։

խարսխի անդրեայն մի մի բարձրաքան-
դակ պատկերք են յայտարարք նշա-
նաւոր տարեկանաց և գործոց մեծա-
մեծաց և սեպհական առաքինութեց
մեծի քահանայապետին[1]։ Ընդ քա-
ռասնօրեայ գալստեան Տեառն պատ-
կեր յուշ մեզ ածէ զընտրութիւն քա-
հանայապետին՝ի գերագոյն պատիւ
եկեղեցւոյ. նաւակն ալէտանջ զխռո-
վայոյզ սկզբնաւորութիւն իշխանու-
թեանն որա ակնարկէ. համբարձումն
Տեառն յերկինս՝ զամբառնալ քա-
հանայապետին յիւրն իշխանութիւն,
և Այսն սուրբ բաղմեալ՝ի գահուն
ընդունի զաղաչանս Ռենեդիկտեայ,
Գրիգորի, Հռոմուալդոսի և Պաւ-
ղոսի, և յայտ առնէ եթէ վաղ իսկ
ընդ իւրով հովանաւորութեամբ ու-
նի զպաշտօնասէրն իւր Հայրապետ։
Ընդանօր տեսանի և մատեանն յո-
ղում Գրիգոր կանխագէտ գոգցես
ելով իւրոց հանդերձելոցն փառաց,
արիաբար ջատագով եկաց առաքելա-
կան գահուն՝ի ծաղկեայ հասակի.
անդ տեսանի բերանացեալ հոսանօք
զայրագնեալն Ինիեն[2] պատառուածս
լերինն Պատիղեայ։ Ընդ և հրապա-
րակն Հռովմայ յառաջինն իւր վեր-
ածեալ՝ի փառս, և՝ի մի կողմն շքեղ
պայծառանայ Թանգարանն Գրիգո-
րեան Հոխացեալ հրաշակերտիւք ետ-
ղուրական գեղոյ և եգիպտացի պեր-
ճանաց և հռովմէական հարստութեանց,
և առ նովաւ գեղարուեստից նշա-
նակք և պսակք և խաչք յայտարարք
առատաբաշխ պարգևաց քահանայա-
պետին առ այնոսիկ որք պետութեան
և կրօնից գտան երախտաւորք։ Եւ
՝ի միւս կողմն մեծակառոյց ամբառ-
նայ տաճարն Պետրոսի յաճիւնացեալ
խրթնութենէն վերականգնեալ յա-
ռաջինն իւր վայելչութիւն, և Պա-
տրիկանեանն տաճար. կենդանատիպ
տեսանէ՝ի վերին զ Լեոն ԺԲ, ՝ի ժո-
ղովուրդն ձգեալ զաչն օրհնաբաշխ,
և վարժք իմաստութեան զոյժ և զո-
գի զգենուն ընդ հզօր և բարերար
ձեռամբն որ պաշտպանն է նոցա և
վարձահատոյց։

Ոչ ինչ ընդհատ՝ի քանդակացն գե-
ղոյ սքանչելի է Ճարտարն և ընտրու-
թեամբն որով առեալ է՝ի քահա-
նայապետին առաքինութեանց զան-
մեկինն հանապազ՝ի զանազան անցս
կենաց նորա. քանզի և զի՞նչ այլ
պատշաճագոյն էր ընտրելոյն՝ի հո-
վիւ հօտին Քրիստոսի՝ քան զՊ-
տուաճպաշտութիւն և զՀեզութիւն,
և առ՝ի նուաճելոյ զխռովս ժողովուրդ-
դեան՝ քան զՕգնութիւն և զՊ-
րիութիւն, և՝ի վարել զժամանակա-
ւորն իշխանութիւն՝ քան զՀղորմու-
թիւն և զՊրդարութիւն, և յաղո-
թանուէր պաղատանս սրբոցն առ
դշխոյն երկնից՝ քան զՅոյս և զՀա-
ւատս։ Պայսոքիկ են ահա և այլ
ևս սոցին հանգոյն նկարագիրք, զորս
չգիտեմ դրոշմեալս արդեօք արժան
իցէ ասել՝ի վիմին եթէ քանդակեալս.
զի թէ էր հնար վիմին հնազանդել
տպագրութեանն ուժոյ, անմարթ
էր տպաւորագոյնս և ճշդագոյն քան
զայս նկարել՝ի նմա զամենայն, և ոչ
անթերի երևեալ նրբագոյն իսկ անհար-
թութեանց պատկերացն և տեսարա-
նաց, որք հնարագիւտ Ճարտարու-
թեամբ քանդակեալ են՝ի նոսին։
Եւ սովին այսու գերահրաշ գործով,
որով արժանապէս պատուեաց Ճար-
տարն զիւրն Մեկենաս, նովին և
յանձն իւր ձգեաց գովութիւնս բա-
զումս։

Սակայն եթէ զարդիս բուռն հար-
կանէր նա զայսպիսւոյ գործոյ, քա-
նիցն և ևս մեծահատոր վիմի կարօտա-
նայր առ՝ի կարող լինելոյ ակներև
կացուցանել՝ի նմա, թէ և յանձուկ
սահմանի, զամենայն իսկ զառ յապա
գործս Գրիգորեան գահակալութեն։
Քանզի (զսակաւն՝ի բազմաց յիշա-
տակելով որպէս և զիարդ՝ի յուշ ինձ
գայցեն, սկիզբն՝ի քաղաքական մե-

[1] Քանդակեալ է անդրիս այս սրբազանին յամի 1833, որոյ վասն չէր մարթ առաջի առնել՝ի նմա զմեծագործութիւնսն որովք յետ այնորիկ և ևս պայծառացաւ։

ծագործութեանցն արարեալ) հարկ լինէր յաւելուլ զերկոցուն սահմանածայր ծովուց պետութեան քահանայապետին Ճոխանալ նորանոր հանդրուանօք նաւուց, և հոյակապ շինուածովք ծովահայեաց ապարանիցն, որք զշքեղ աւուրս Կուիրինեան քաղաքին ածեն մեզ 'ի յիշատակ։ Հարկ լինէր առաջի առնել զնորանոր ուղիսն և զկամուրջս և զապարանս 'ի զանազան պէտս օգտի ժողովրդոց, կամ 'ի զարդ պերճութեան հասարակաց, և զայլ ևս շինուածսն նորոգեալս ընդարձակեալս և զարդարեալս և կամ 'ի հիմանց իսկ կառուցեալս 'ի քաղաքին և շուրջ 'ի գաւառսն։ Հարկ լինէր յանդիման ցուցանել զգեղեցիկ կարգս քաղաքական տեսչութեան և զօրինաց, զդատաստանաց, զզինուորութեան, զդրամոց և զողջոյն իսկ զտնտեսութիւն գործոց հասարակաց։ Պպա և զհրճուանս և զմեծարանս սիրոյ զորս յելանելն բազում անգամ յայց իւրոց սահմանաց՝ յամենեցունց ընդունէր 'ի հաւատարիմ ժողովրդէն. որով և այցելութիւնք նորա արդարև յաղթութիւնք էին անընդհատք քանթէ ուղևորութիւնք։ Պարձեալ և զհաստատութիւն նորանոր կարգաց ասպետութեան և կամ զնորոգութիւն այլոց, որք խրթնացեալ գոլով 'ի հընութենէ ժամանակաց՝ այժմ վերըստին փայլեցին վաղեմի փառաւքն։ Եւ զմոռելիս բարեկամութիւնս քաղաքականս անքակ պահեալս, կամ վերստին հաստատեալս ընդ առաջինս 'ի թագաւորութեանց աշխարհի։ Ընդ տեսանելաք յայնժամանկեալս առ ոտիւք նորա հիացմամբ և պատկառանօք զխռուահեր զվայրագասուն բնակիչս Պանատայ, և զսղնձագոյն որեարն Եթովպիոյ, և զիրոխտն զայն արաքացի որ նստին յաթոռս Փարաւոնեանց՝ զի առաքեր առ նա 'ի նուէր 'ի զարդ քրիստոսական տաճարաց զաբեղեան կիճն լուսանցոյց, որով շքեղացեալք լինէին երբեմն մեհեանք անուանեացն Պպեայ և Ոսիրիդեայ. և զահաւոր զսուսերն հիւսիսոյ խոնարհեալ պատկառանօք առաջի խաղաղութեան հեզահամբոյր վեհապետին, այն որ ահացուցեալ կասեցոյց երբեմն զնոյն ինքն զՀարուածն Պստուծոյ առ ափամբք Պադոսի։ Եւ զինչ այլ ևս. ոչ ասպաքէն և առատաձեռնութիւն մի է 'ի գերահամբաւ առաքինութեանց իշխանաց աշխարհի։ Եւ կարի իսկ քաջ. ապա ուրեմն պարտէր Ճարտարին առանձինն ցուցանել զանչափ գումարս դրամոցն ծախելոց 'ի սեպհական իսկ ստացուածոցն 'ի շինութիւն քաղաքաց և գաւառաց, որք սուերեցան 'ի հեղեղաց, 'ի հրկիզութեանց, 'ի սասանութէ և յայլոց համաշխարհական աղետից. յորոց մի ջի անջինչ պահեսցի յիշատակ գաղտնախորհուրդ և մահաշշուկ ախտին՝ որ յառաջ քան զտասն ամ դիմեալ 'ի վերջին ծագացն արևելից, զահ և զկոտորած սփռեաց ընդ Եւրոպէ համ օրէն, և ապա շիջեալ դադարեաց 'ի խռան հառաչանաց և անդադար աղօթից որք 'ի վերյաթոռ Տիրամօրն ելանէին 'ի հռովմէական գաւառաց։ Եւ անմարթ իսկ էր անյիշատակ թողուլ յարքայական նորին առատաձեռնութեանցն կարգի զպատուական պարգևս նորա առ թագաւորս, առ իշխանս, առ ծիրանաւորս, առ եպիսկոպոսունս, առ դեսպանս պետութեանց, առ քաղաքանին, առ եկեղեցիս և առ վանորայս և առ սոսկականս անդամ, զոսկեղէն զվարդսն, զաշտանակս, զանօթս, զկերպասս, զգիրս, զդրոշմածս, զմիւսիոն նկարս և զազգի ազգի քանդակս, յորս յոլով ուրեք զանցանէ զաշնութեամբ նիւթոյն Ճարտարութի արուեստին, և զորոց վկայեն՝ թող զհեռաւոր աշխարհս՝ նախ առաջին աշխարհ ծնընդեան նորա քաղաքն Պելլուն, և ապա երկրորդ նորին հայրենիք, որպէս և ինքն իսկ կոչէ, քաղաքս Վենետկոյ, և սոյն այս ուխտ միանձանց սո-

զամբարձեալ զերկոցունս ծագաց ծովուց պետութեան քահանայապետին Ճոխանալ նորանոր հանդրուանօք նաւուց, և հոյակապ շինուածովք ծովահայեաց ապարանիցն, որք զշքեղ աւուրս Կուիրինեան քաղաքին ածեն մեզ 'ի յիշատակ։ Հարկ լինէր առաջի առնել զնորանոր ուղիսն և զկամուրջս և զապարանս 'ի զանազան պէտս օգտի ժողովրդոց, կամ 'ի զարդ պերճութեան հասարակաց, և զայլ ևս շինուածսն նորոգեալս ընդարձակեալս և զարդարեալս և կամ 'ի հիմանց իսկ կառուցեալս 'ի քաղաքին և շուրջ 'ի գաւառսն։ Հարկ լինէր յանդիման ցուցանել զգեղեցիկ կարգս քաղաքական տեսչութեան և զօրինաց, զդատաստանաց, զզինուորութեան, զդրամոց և զողջոյն իսկ զտնտեսութիւն գործոց հասարակաց։ Պպա և զհրճուանս և զմեծարանս սիրոյ զորս յելանելն բազում անգամ յայց իւրոց սահմանաց՝ յամենեցունց ընդունէր 'ի հաւատարիմ ժողովրդէն. որով և այցելութիւնք նորա արդարև յաղթութիւնք էին անընդհատք քանթէ ուղևորութիւնք։ Պարձեալ և զհաստատութիւն նորանոր կարգաց ասպետութեան և կամ զնորոգութիւն այլոց, որք խրթնացեալ գոլով 'ի հընութենէ ժամանակաց՝ այժմ վերըստին փայլեցին վաղեմի փառաւքն։ Եւ զմոռելիս բարեկամութիւնս քաղաքականս անքակ պահեալս, կամ վերստին հաստատեալս ընդ առաջինս 'ի թագաւորութեանց աշխարհի։ Ընդ տեսանելաք յայնժամանկեալս առ ոտիւք նորա հիացմամբ և պատկառանօք զխռուահեր զվայրագասուն բնակիչս Պանատայ, և զսղնձագոյն որեարն Եթովպիոյ, և զիրոխտն զայն արաքացի որ նստին յաթոռս Փարաւոնեանց՝ զի առաքեր առ նա 'ի նուէր 'ի զարդ քրիստոսական տաճարաց զաբեղեան կիճն լուսանցոյց, որով շքեղացեալք լինէին երբեմն մեհեանք անուանեացն Պպեայ և Ոսիրիդեայ. և

[1] Այն է ասիական ախտն մաղձացաւ կոչեցեալ (ֆուէրա)։

վին պարգևաւս՝ որոյ վասն ժողովեալ իսկ եմք աստանօր. ընդ որս և զիս ինքն համարձակիմ 'ի Թիւս նոցին անուանել. քանզի ուր ոչինչ իսկ են արդիւնք վաստակոց, անդ և պայծառագոյն երևի բարերարութիւն իշխանին։ Այլ եթէ զայսոսիկ իբրև զիշխանէ իմասցուք, զի՞նչ ապա զ'Հանայապետէն, որ խոնարհն է նա յաչս անձին իբրև զՀիմարիտ միանձն, այլ զօրացեալ մեծանձն արութեամբ՝ զոր Թելադրէ նմին վսեմականն իւր մեծութի. զորմէ և աբբայն Պայծառաձորոյ վանից Հարտարաբանէր առ այլ քահանայապետ իւրոյ ժամանակին։ Այս վկայեն ազգողաբան Թուղթքն ընդհանրականք, յորս զՊրիգորեանցն և զ'Լոնեանց և զ'Սնովկենտեանց վարեալ զլեզու, այնպէս հզօրագոյնս որոտացեալ 'ի Պատիկանեան արքունեացն, զի մինչև 'ի ծագս աշխարհի լսելի եղև բարբառ նորա. յորժամ 'ի վարժարանս գիտութեաց, 'ի բանակս պատերազմողաց, 'ի խորհրդարանս տեսչութեանց, կամ 'ի նոցին իսկ յարքունական գահոյից 'ի վեր երևեցան վարդապետութիւնք և սահմանք և օրէնք և հրովարտակք աղաղտիչք լրութեան հաւատոյ կամ ընկերահաշտ կարգաց կամ անդորրութեան ժողովրդոց և կամ իշխանութեան եկեղեցւոյ։ Արդարև յայնժամ, և զայն բազում անգամ, լսելի արար եթէ Պետրոսիւ խօսէր նա, Պետրոսիւ՝ որում ետ Քրիստոս զգերագոյն իշխանութիւն երկնիցն փականաց. այլ զիշխանականն զվսեմութիւն ամոքեր հեզահամբոյր քաղցրութեամբն, որպէս և վայել է իմաստուն հովուապետին, որում ասաց Քրիստոս. "Արածեա զգառինս իմ, արածեա զոչխարս իմ"։ Բա՛ռք, քանի՛ հայրագութ խնամք և քանի՛ իմաստք բարեհամբոյրք յորդեն 'ի բանից առաքելական նամականւոյ նորա, յորս է զի յորդոր լինի հովուաց զգուշանալ հօտին որ նոցա աւանդեցաւ, է զի ողբայ զչարիս որ տագնապեն զեկեղեցի, և է զի կարդայ զորդիսն աղօթակիցս լինել նմա, և կամ բաշխէ 'ի նոսա զգանձս հոգևորս. գովէ և քաջալերէ զհիմնադիրս և զնորոգիչս և զբարերարս վարժոցաց, որ հաստատակաց և որ առանձինն, 'ի դաստիարակել զմանկունս, 'ի ժողովել զծերացեալս, 'ի դարմանել զաղքատս, և մանաւանդ 'ի խլել զմոլորութիւնս և զախտս, և 'ի տարածել ընդ ամենայն տեղիս զՀիմարտութիւն և զամենայն առաքինութիւնս քրիստոսական կրօնից։

Իսկ զի՞նչ ասացից զիմաստութենէն մեծէ որ ցանգ առաջնորդեաց նմա յընտրել և 'ի կարգել զականաւորս 'ի մարդկանէ 'ի զանազան գաշտամունս ուխտի եկեղեցւոյ, զոմանս առ 'ի պաշտպան կալ իրաւանց եկեղեցւոյ առ օտար պետութեամբք, և զայլս առ 'ի գլուխ տանել զդժուարին տեսչութիւն եպիսկոպոսական պաշտամանց, և 'ի յաւելուլ զթիւս քահանայապետական շքեղ ծերակուտին, 'ի բաց 'ի նոցանէ առնելով՝ թէ կամիցիք՝ զիմն անարժանութիւն։ Զի՞նչ և զգերմարդկային մեծվայելչութենէն ասացից, որով բանս արկեալ խօսի երբեմն 'ի ժողովս ծիրանազգեստ Հարանցն՝ որ պատկառելի զնովաւ բոլորեն ակումբ, և մինչ 'ի բարձրաւանդակ պատշգամն Պատիկանեան պալատանն ձգեալ զաչ իւր 'ի վերայ անհամար բազմութեան ժողովրդոց յերկիր խոնարհելոց առաջի նորա, արձակէ զառաքելականն օրհնութիւն մինչև ցվայրն յորս մուտ գտեալ ցեղ աւետարանն Քրիստոսի. և բնաւ որչափ տանի կրօնս մեր զշուք և զպայծառութիւն՝ նոքիմբք փառաւորէ զմեծահանդէս տօնախմբութիւս 'ի կատարել անդ վայելչապէս զխորհուրդս աստուածայինս 'ի մայր կաթուղիկէին տիեզերաց։ Այս բնաւ զի՞նչ այլ և ասացից զնորահրաշ հանդիսից հաստատելոց նորին իսկ առաջնորդութեամբ, զթափօրից, զհասարակաց աղօթից, զյոբելինաց, զնա-

ւակատեաց տաճարաց, զոսկեղէն պը-
սակացն 'ի գլուխս եդելոց պատկե-
րաց Տիրամօրն, և առաւել քան զա-
մենայն զբազմածախ պատրաստու-
թեանցն որ յամենայն ազգաց երկրի
ած կոչեաց զանթիւ բազմութիւն
մարդկան յափունս Տիբերի 'ի յաւե-
լուլ անդ նորա արս հինգ 'ի դասս
երկնաքաղաքացեաց վերնոյն Սիոնի։
Սոքա են աւասիկ պաշտամունք Հը-
ռովմայ քահանայապետին, և զսոսա
բազում անգամ շքեղ կարգօք կատա-
րեաց ԳՐԻԳՈՐԻՈՍ։

Այլ եթէ տարածութիւն հաւա-
տոց է որ փառաւոր ևս առնէ զփո-
խանորդ Քրիստոսի, իցէ՞ այն երբէք
այնպէս արագագոյն 'ի հեռաւոր աշ-
խարհս ընդարձակեալ, քան զոր ընդ
հովանաւորութեամբն ԳՐԻԳՈՐԻԱՆ։
Գիտակ իսկ են ամենեքին եթէ կըղ-
զին այն մեծ, որ կոչեցեալն էր երբեմն
Սրբոց կղզի, և որ յերեքհարիւրոց և
աւելի ամաց հետէ հերձեալ է յեկե-
ղեցւոյ, այժմ ՀԿՆի զոդել միսան-
գամ ընդ վիմին անկեան։ Յամենայն
'ի դաւառս մեծին Բրիտանիոյ, Կալ-
լեսի, Լանքասթրի և Յորքայ հաս-
տատեալ են տեղակալք առաքելական
գահուն, և միայն 'ի յետին վեցեակ
ամս կանգնեցան անդէն յիսուն և
չորք եկեղեցիք ուղղափառաց, և վա-
նորայք միանձանց թուով քսան և ութ։
Գիտակ իսկ են, զի այժմ համար-
ձակ է մուտ աւետարանչաց շնորհա-
տուր օրինացս Արաբիա, 'ի Լոնքին,
յերկնայինն անուանեալ պետութի՝
և յայլ ևս կղզիս որ ցիր և ցան կան
յընդարձակ սփիւռս աշխարհացն
Հնդկաց։ Ոչ ոք անգիտանայ եթէ
Ովկիանիա, Յորն Կրանատա, Մեք-
սիկոյ, Քիլի և որ ընդ այրեցածիւն
հասարակապետութիւն, կարի քաջ
այնդեալ են 'ի կրօնականս ընդ առա-
քելական գահուն. և յանկոխ ան-
գամ վայրս նորոյ աշխարհին, որոց և
անուանք անծանօթք էին 'ի մէնջ,
անդանօր ևս կանգնեցաւ յաղթա-
կանն դրօշ խաչին Քրիստոսի, և 'ի
Պալթիմոր բազում անգամ գումա-
րեցան ժողովք ազգայինք, և յամե-
նեսին 'ի նոսա յաւելեալ տեսանէին
նորապսակ եպիսկոպոսունք. և 'ի
Միացեալ նահանգս ուր ամօք ինչ
յառաջ ոչ ինչ կարի առաւելոյր թիւ
ուղղափառացն քան զմիլիոն մի, ըստ
արդի հաշուոց սակաւ ինչ նուազ են
արդ քան զմիլիոնս չորս։ Այ՜ ո՞վ ոք ոչ
գիտիցէ եթէ ծովեզերք Աֆրիկոյ,
որք դադարք էին երբեմն յելուզա-
կաց, ոռոգեալք արեամբ և քրտամբ
քրիստոսակրօն անթիւ գերութենն,
այժմահա սկիզբն առնեն թօթափել
յանձնէ զլուծ մոլար աղանդոցն, և
զկնի հազարաց և չորեք հարիւր ա-
մաց տեսանեն նստեալ զյաջորդն ()-
գոստինոսի երանելւոյ յայն աթոռ,
որ այնպիսեաւ պայծառացեալ էր եր-
բեմն գերահռչակ անուամբ։ Արդա-
րև կրօնական յաղթութեանցս այսո-
ցիկ Ճանապարհ հորդեցին բուռն և
յաղթական զէնք ազգաց մեծամե-
ծաց և հզօրաց, և դիւցազունք հա-
ւատոց թողեալ զաշխարհն հայրենի
և զազգակիցս իւրաքանչիւր՝ խոյա-
ցան 'ի խուժիցն աշխարհս կազմք և
պատրաստք 'ի տանել առաքելական
վաստակոց և արհաւրաց մարտիրոսու-
թեան. սակայն և այն Ճշմարիտ է,
զի 'ի Հռովմայ ընկալան նոքա և ոչ
այլ ուստեք զայն եռանդն և զարիու-
թիւն, զոր մեծախորհուրդն այն պա-
հանջէր գործ։ Քանզի 'ի Հռովմ
ևեթ բացեալ կայ վարժարանն այն
սքանչելի առաջի ամենայն ազգաց,
յորմէ ելանեն առաքեալք մերոցս
ժամանակաց, յորում անպակաս նո-
րոգին գոգցես սքանչելիք Հոգւոյն
սրբոյ որպէս 'ի վերնատանն, լուսա-
ւորելով զմիտս նոցա, և բորբոքելով
զսիրտս, և բաշխելով զպարգևս պեր-
Ճախօսութեան յիւրաքանչիւր բար-
բառս աւետարանչացն առ ազգս ան-
հաւատից։ Այլ ուստի՞ իցէ եռանդն
և կենդանութիւն այսր դպրոցի, ե-

։ Ի Զինս։

թէ ոչ 'ի Գ՝ՐԻԳՈՐԻ, որ կարգս նմին սահմանէ, ուղղէ զՋանան, վառէ զբ-բորբոքմունսն և ծաւալէ 'զոգիսն։ Այս ուրեմն Գ՝ՐԻԳՈՐ է կենդրոնն առաջին, նա է արեգակն յորմէ հատեալ Ճառագայթիցն և ցոլացեալ անդր քան զլերինս և զծովս՝ փարատեն զստուերս մահու։ Այս է անիւն մեծ յորմէ շարժին այլքն մանունք բազմաթիւք, և որովք կազմի մեծն այն մեքենայ առաքելական քարոզութեանց։ Այս միայն կարող է ասել զբանն Քրիստոսի. "Երթայք և քարոզեցէք"։ զի զնորին ունի զիշխանութիւն. և 'ի լսել անդ զբանս զայսոսիկ անդէն և անդ ընթացեալ հասանեն մինչև 'ի ծագս աշխարհի քարոզք աւետարանին։ Այսպէս ուրեմն յայտնագոյնս տեսանէք, տեարք, զի թէ զամենայն իսկ զքաղաքական և զեկեղեցական իշխանութեանն զարդիւնս, որովք լի են յիշատակարանք Գ՝ՐԻԳՈՐԻ, կամ լիներ ումեք մի առ մի 'ի յայտ ածել, այնչափ ինչ իրք գտանին, զի ոչ միայն պարտասեալ բթացուցանեն զգրիչս երկաթիս տասանց քանդակագործաց, այլ և զգրիչս բազում մատենագրաց, որոց կամիցին աւանդել յետնոց զվէպս կենացն նորա։

Այլ թերևս հարցանիցէ ոք, եթէ զի՞ է զի քան զայլս զամենեսին որոց կարող էր պարգևել նա զանդրիս իւր զայս՝ զընծայեալս նմա 'ի պասանեցւոյ քանդակագործէն, նախապատիւ արար նա զայս ուխտ վանաց յորում արդ ժողովեալս եմք։ Այլ է ինձ հնար այլազգ լրումն տալ ըղձից ձերոց, եթէ ոչ կարծեօք ևեթ, այսինքն է եթէ յայս ձգեալ իցէ քահանայապետն 'ի վաղեմի և 'ի մտերմական սիրոյ։ Բանզի և դուք իսկ քաջ գիտէք եթէ մի 'ի գերագոյն լաւութեանցն Գ՝ՐԻԳՈՐԻ այս է, անդրդուելի հաստատութիւն 'ի մտերիմ բարեկամութեան, որով ոչ ժամանակաց յերկարութիւն, ոչ վայրաց հեռաւորութեամբ, ոչ իշխանութեանն մեծութեամբ և ոչ հոգոյն ծանրութիւն և բազմութիւն, ոչ միայն չմոռացաւ նա, այլ և ոչ հովութեամբ վարեցաւ ընդ արս՝ որք սիրելիք նմա եղեն երբեմն։ Յորոց 'ի բազմաց վկայ ձեզ կացցէ վերջին պատրիարգն Կոստանդնուպօլսոյ, որ մի 'ի պարծանաց է ուխտի եկեղեցւոյս մերոյ '. զոր կոչեցեալ առ ինքն քահանայապետին՝ արար նմա բազում բարիս, 'ի հիւանդութեան նորա յայց ելառ նա, և 'ի մահուն ելաց զնա, և չիրիմ մարմարեայ կառոյց նմա. 'ի մանկութեան տիոցն մտերիմ էր նորա, և արժանի ծանեաւ զնա սիրելութեանն որով մեծարէրն զնա։ Ի նոյն պատՃառաց ահա կարծեմ ձրգեալ զնա և 'ի պատուել զայս գերդաստան միանձանց։ Բանզի յորժամ կղզեակքն որ պսակաձև իմն շուրջ պատեն զԱ՝ենետիկ քաղաքաւս, լի էին պաշտօնասէր միայնակեցօք, որք յաղօթս և յուսմունս զաւուրսն անցուցանէին, և երբէք երբէք յայց իրերաց ելանէին. և յորժամ և Գ՝ՐԻԳՈՐԻՈՍ մի էր 'ի նոցանէ, և զուարՃանայր 'ի սուրբ և յիմաստախնդիր միայնարանին սրբոյն Մ՝ԻՔԱՅԵԼԻ որ 'ի Մ՝ուրան, ո՞ գիտէ քանիցս արդեօք գայր նա 'ի Սուրբս Ղ՝ազար, և անդրստին յայնմ ժամանակէ սկիզբն արարեալ էր Ճանաչել և մեծարել զպաշտօնասիրութիւն և զկարգս և զիմաստութիւն մեծարգոյ միայնակեցացս այսոցիկ, որ այնպէս քաջ գիտեն ընդ խստամբերութեան անապատի զօդել զշնորհս անարատ քաղաքավարութեան։ Այս քանզի ծերագոյնքն 'ի սոցանէ տեսեալ էին յականէ զպատուական նախահայրն իւրեանց զԱ՝խիթար, որոյ նշխարք ոսկերաց աստէն թաղեալ կան, և որում պատրաստի արդ սեղանոցն պատիւ, ձեզէն իսկ կարէք իմաստասիրել եթէ քանիցս և որչափ ըղձիւք արդեօք

1 Նա ինքն է Անտոնիոս Թրավերսի՝ պատուոյ անուամբ պատրիարգ կոչեցեալ Լատինացւոցն որ 'ի Կոստանդնուպօլիս։ Ծնեալ էր նա 'ի Վենետիկ, և վախճանեցաւ 'ի Հռոմայի 1843։

լսէր նա 'ի նոցանէ զվէպս բազմավաստակ պանդխտութեանց նորոյն այնորիկ Հոր հաւատոց, որ յառաջ քան զամս հարիւր և յիսուն հանդերձ հաւատարիմ գնդաւ միոյ ածի ընդ իւր 'ի ստորոտացն Բրարատայ և յափանցն Անփրատայ և Տիգրիսի զկաթուղիկէ հաւատս՝ զքարոզեալն առ հարս իւր յառաքելոց սրբոց 'ի Թադէոսէ և 'ի Բարթուղիմէոսէ, և 'ի Ղուսաւորչէն Գրիգորէ, անբիծ և անշաղախ պահեալ զնոյն 'ի մէջ հերձուածոց և այլազան մոլորութեանց։ Եւ 'ի խօսակիցն լինել ընդ երկար զաստուածահաճոյ իրաց ընդ իմաստուն միանձունս այնր ժամանակին, յորոց թերևս ոմանք կեան մինչև ցայժմ, և լսեն իսկ արդեօք բանիցս, չիք ինչ երկբայութիւն եթէ յայնմ ժամանակէ հետէ և այսր կապեալ իցէ նորա ընդ նոսա մեծարանօք և սիրով. զորոյ պահեալ և ցարդ զքաղցրյիշատակս, կամեցեալ իցէ այսու պարգևօք յաւերժացուցանել զնոյն սէր և յայտնել ամենեցուն։

Բայց թուի ինձ թէ ոչ այնչափ անցելոցն յիշատակ, որչափ տեղեկութի այժմեան հանգամանաց սոցա ձգեաց 'ի կղզիս յայս առանձինն օրինակաւ զքաղցր հայեցուածս նորա։ Բանզի հոգք ծանունք խնամոց նորա, զոր ունի 'ի վերայ ամենայն եկեղեցեաց աշխարհի, ոչ ինչ խափանեն զնա դառնալ երբէք երբէք և մտադիւրագոյնս հայել յայս փոքրիկ՝ այլ սիրելի մասն մեծի հօտին յանձնելոյ նմին 'ի պահպանութիւն։ Կան իսկ առաջի աչաց նորա ոմանք արժանաւոր նուիրակք Քրիստոսաբանութեանս, որոց և տուեալ է նա օթևան հիւրընկալու, և 'ի նոցանէ իմանայ ճշդիւ որ ինչ անցք անցանեն 'ի սուրբն Գաղար։ Գիտէ նա եթէ առաջնորդ ոմն՝ պատուական՝ ընդ իշխանութեան իւրում կցորդեալ ըզքաղցրութիւն հայրենի, ամոքական սանձիւ կառավարէ աստէն զգերդաստանս բարեպաշտօն, և խնամով պահպանէ զաւանդն սուրբ ուղղափառ վարդապետութեան, որպէս և աւանդեցաւ նմա յիւրոց նախորդաց։ Գիտէ նա եթէ աստ դաստիարակին խընամով Հայկեան մանկտին՝ ոչ միայն 'ի կրօնաւորական այլ և 'ի քաղաքական գիտութիւնս, և զի աստի սփռին ընդ օտար աստեղօք գունդք անմահականք առաքելական շահատակաց սփռել զլոյս ճշմարտութեան 'ի մէջ ստուերաց տգիտութեան և մոլորութեան. աստ ամենեքին 'ի գիրս թարգմանեալք՝ 'ի նոսին ծերանան և մեռանին. գրեն և թարգմանեն յայլ և այլ լեզուս, տպագրեն մատեանս բազմահատորս սրբազան և արտաքին իմաստից, և սփռելով զնոսա 'ի կողմանս կողմանս յելիցն արեգական մինչև 'ի մուտս նորին, 'ի միութիւն եղբայրութեան լծորդեն զգիտութիւն արևելեայց ընդ արևմտեայս։ Գիտէ նա եթէ երկիրս այս նուիրեալ արևելեան արարողութեանց, և յորում շնչէ գոգցեաս սիւք զուարթարար գեղեցկատիպ վայրացն ճոխացելոց 'ի քնութենէ, այս երկիր տայ մեզ զտարացոյց մեծվայելչութիւն վաղեմի պաշտամանց եկեղեցեացն Ասիոյ՝ մինչ քրիստոսական կրօնիւքն պերճացեալ էին. այս երկիր շքեղացեալ գեղեցիկ տնկօք և հոյակապ շինուածովք՝ մի է 'ի պատուականագոյն ականց որովք պճնի քաղաքն Անետիկ, և 'ի հիացումն ամբարձեալ 'ի մէջ ջուրց՝ զայցելուացն զաչս պարարէ շքեղ տեսարանօքն. որ և յաղագս այսոցիկ անհամեմատ գեղեցկութեանց արժանապէս դրուատեցաւ քերթողական երգովք յումեմնէ 'ի մեծազօր իշխանայ Գերմանիոյ, որ հաւասարազօր քաջութեամբ վարէ զգաւազան թագաւորութեան և զքնարն քերթողական[1]։ Ընդ գիտելով չափ ԳՐԻԳՈՐԻ զայս ամենայն, զի՞նչ զարմանք իցեն ընդ այսչափ սիրել նորա և մեծարել զԱբրահանութիւն Ասիթարեանց, և

[1] Ազբայն Պաւերայի Լուդովիկոս, որոյ քերթուածն զմերոյ մենաստանէս՝ տպագրեալ իսկ է եռալեզու թարգմանութեամբ։

զի յիշատակաւս այսուիկ որ առաջիս մեր կայ կամեցեալ իցէ տալ յայտնի վկայութիւն զիւրոյ յաւերժական սիրելութեանն առ նոսա ։

Այսն որոյ ներեցէք ինձ , Այիանձունքդ առաքինիք , զի խրախակից եղէց ընդ ձեզ ը այսքանոյ պատուական վկայութե , զոր չնորհէ ձեզ նա ինքն փոխանորդն Քրիստոսի 'ի գահոյիցանտի՝ յոր չմատեաւ երբէք շողոմութի և ոչ ստութիւն ։ Այ քանզի փափաքեցէք դուք զի և ես հաղորդակից և հանդիսադիր կացիս հրաշափառ տօնախմբութեանս , որ ոչ այլով իւիք դառնանայ՝ բայց 'ի վշտալից և յերկարատև խօթութենէն որ չտայ մեզ տեսանել աստանօր զձերդ սիրեցեալ Հայր և զառաջնորդ ' , ներեցէք ինձ զի և Թարգման կացիս ես և սոցա ամենեցուն աստէն ժողովելոցս , և յանուն նոցին ևս ընդ ձեզ եղէց խնդակից ։ Տեսէք ահա զաւագանին ամենայն և զառաջնորդս եկեղեցւոյ և զամենայն կարգաց կրօնից , որ զուարթագինս յանձին կալեալ զհրաւերդ ձեր , ընթացան այսր՝ ոչ միայն 'ի տեսանել զանդրի քահանայապետին , այլ և խնդակցել ընդ ձեզ , և գալըստեամբն իւրեանց տալ ձեզ յայտնագոյն և անխաբ ցոյցս ուրախութեան զսրտից իւրեանց ։ Այ արժանի իսկ էիք դուք . զի բնակութիւնս զոր կալայք աստ 'ի կղզւոջս իբր 'ի հարիւր և 'ի յիսնից ամաց հետէ , ոչ միայն առանց ինչ քրթմնջանաց ումեք տալոյ պատճառս , այլ և վարուք հաճոյականօք ամենեցուն , զանստգիւտ և զանչեղի քաղաքավարութիւն ձեր յայտ առնէ , և զիմաստասէր վաստակսդ և զմեծամեծ ծառայութիւնսն զորս բազմօրինակ մատուցանէք եկեղեցւոյս Այենետկոյ ։ Յաւերժասցի ուրեմն բնակութիւն ձեր 'ի հիւրընկալ ծովակիս ։ Ներուսնիքդ ա-

1 Քանզի 'ի նոյն աւուրս հիւանդագին կայր յանկողնի Գերապայծառ Տէրն մեր Սուքիաս Վարդապետ Սոմալեան . որ և յետ ինուսնց աւուրց հանգեաւ 'ի տէր ։

լևորեալք յերկարաձիգ մարզս իմաստից և 'ի հրահանգս վանականս , տեսցեն ցանգ շուրջանակի իբրև ըզմատաղատունկս ձիթենւոյ զերամս հեզահամբոյր և պատուադիր երիտասարդաց , որք նախանձաւորք լիցին ոգւոյ ծերունեաց և անարատ քաղաքավարութեան նոցա . և սոքա դարձեալ յորժամ զնոսա փոխանակեսցեն՝ տեսցեն զանձինս շուրջ բոլորեալ 'ի նորաբողբոջ ակնկալութեանց , որովք միշտ կենդանի և ծաղկափթիթ պահեսցեն և ցդարս բազումս ձգեալ ծաւալեսցեն զօրհնեալ ձեր զսերունդս . որպէս զի թէ և բռնութեամբ ժամանակաց , որում չէ հնար կալ ընդդէմ , անձինք ձեր զմիմեանս փոխանակեսցեն , այլ միաբանութիւնդ ձեր պատուական նոյն կացցէ և մնասցէ մինչև 'ի սպառ ։ Այսոքիկ են ուխտք սրտի իմոյ վասն ձեր , զոր այս առաջին անգամ յայտ աւասիկ արարի , և տացէ տէր զի լրումն առցեն նոքին , և կղզիս սրբոյն Ղազարու դրոշմեսցէ զօրս զայս 'ի թիւս բերկրալից աւուրցն որովք մինչև ցայսօր պայծառացաւ ։

(ԹԱՐԳՄ · Հ · Օ · ԳՈՒՐԳ ։)